

Ղատական Գործ N: ՎԴ/6922/05/13

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	05-08-2013
Հայցվոր/դիմող	
Անուն	Լալա
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	Կոտայքի մ գ.Գառնի
Ներկայացուցիչ	
Անուն	Մկրտիչ
Ազգանուն	Ղավթյան
Հասցե	Գ.Զոհրապի 60տ
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգելոյան
Հասցե:	Կոտայքի մարզ ք.Հրազդան
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Կոտայքի մարզպետարան
Հասցե:	նշված չէ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն:	Գառնիի առողջության կենտրոն ՊՓԲԸ ընկերության տնօրեն Լիլիթ Կարապետյան
Հասցե:	Կոտայքի մարզի գ.Գառնի Զ.Ալեքյան 18
Պահանջ:	07.03.2013թ թիվ 68-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես իրավական հետևանք 2013թ-ին հաստատմանը ներկայացված հաստիքացուցակն անվավեր ճանաչելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	1.2
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	05-08-2013
Նախագահող դատավոր	
Ղատարանի անվանում:	Վարչական
Ղատավորի անուն:	Արծրուն Միրզոյան
Ղատավոր	
Ղատարանի անվանում:	Վարչական
Ղատավորի անուն:	

Ամսաթիվ:	05-08-2013		
Պետ. տուրք (<< դրամ):	0		
Այլ նշումներ:			
Ամսաթիվ:	12-08-2013		
Որոշման հիմքը			
Հոդված	8		
Որոշման հիմքը			
Հոդված	79	Մաս 1	Կետ 1
Որոշման հիմքը			
Հոդված	76	Կետ 3	
Որոշման հիմքը			
Հոդված	15		
Որոշման հիմքը			
Հոդված	144		
Որոշման բովանդակություն:			
Այլ նշումներ:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵՆՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>Գործ թիվ ԿԴ/6922/05/13 «12» օգոստոսի 2013թ. ք. Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ դատավոր Ա. Միրզոյան, ծանոթանալով Լալա Ղազարյանի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին, ՊԱՐՁԵՑ՝</p> <p>Լալա Ղազարյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ << Կոտայքի մարզպետի, «Գառնի առողջության կենտրոն» ՊԲԲԸ-ի տնօրեն Լիլիթ Կարապետյանի՝ «<< Կոտայքի մարզպետի 07.03.2013թ. թիվ 68-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք մասնակի՝ հաստիքացուցակի ԱԱՊ բաժնում մանկաբարձուհու հաստիքը կրճատելու մասով, «Գառնի առողջության կենտրոն» ՊԲԲԸ-ի կողմից կազմված և 2013թ. << Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացված հաստիքացուցակը, անվավեր ճանաչելու» պահանջների մասին: Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.</p> <p>Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը, վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով, հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:</p>		

	<p>Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:</p> <p>Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և չի ծագում հանրային իրավահարաբերություններից:</p> <p>Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին»:</p> <p>Դատարանը գտնում է, որ սույն հայցադիմումով ներկայացված պահանջները աշխատանքային բնույթի են, ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում և բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից, ուստի սույն հայցապահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատյա չէ վարչական դատարանին:</p> <p>ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:</p> <p>Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ, 144-րդ հոդվածներով, դատարանը ՈՐՈՇԵՑ՝</p> <p>Լալա Ղազարյանի կողմից ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետի, «Գառնի առողջության կենտրոն» ՊԲԲԸ-ի տնօրեն Լիլիթ Կարապետյանի՝ «ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ. թիվ 68-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք մասնակի հաստիքացուցակի ԱԱՊ բաժնում մանկաբարձուհու հաստիքը կրճատելու մասով, «Գառնի առողջության կենտրոն» ՊԲԲԸ-ի կողմից կազմված և 2013թ. ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացված հաստիքացուցակը, անվավեր ճանաչելու» պահանջների մասին, ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժել:</p> <p>Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:</p> <p>Սույն որոշման դեմ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան բողոք կարող է բերվել այն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:</p>
	ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ
Օրենսգիրք:	Այլ
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
Ամսաթիվ:	12-08-2013
Ելքի համար:	85420

Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	06-09-2013
Էջերի քանակը:	42
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	05.02.2014թ. գործը հանձնվել է գրասենյակ
Ամսաթիվ:	06-09-2013
Էջերի քանակը:	42
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Վարչական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	Ե-ՂԴ-9-88054/13
Ամսաթիվ:	11-09-2013
Ամսաթիվ:	09-12-2013
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	10-02-2014
Էջերի քանակը:	133
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	գործը հանձնվել է դատարանի գրասենյակ 07,04,2014թ.: գործը բաղկացած է 133 թերթից:
Պատական Գործ N: ՎԴ/6922/05/13	
Ամսաթիվ:	03-09-2013
Բողոք բերող անձը	
Անուն	Լալա
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	Կոտայքի մարզ, գ.Գառնի
Ներկայացուցիչ	
Անուն	Մկրտիչ
Ազգանուն	Ղավթյան
Հասցե	ք.Երևան, Գ.Զոհրապի 60 տուն
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	

Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ՀՀ վարչական դատարանի 12.08.2013թ. հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ
Գործի համարը:	ՎԴ/6922/05/13
Ամսաթիվ:	11-09-2013
Վիճակագրական տողի համարը:	1.2
Գործի համարը:	ՎԴ/6922/05/13
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	42
Գործը ստացվել է:	Վարչական
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	11-09-2013
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Արա Բաբայան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Երբ:	17-09-2013
Որոշումը ուղարկվել է կողմերին:	17-09-2013
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	17-09-2013
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	07-10-2013
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>գործ թիվ ՎԴ/6922/05/13 Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԵՐժԵԼՈՒ ՄԱՍԻՆ «07» հոկտեմբերի 2013թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)՝ նախագահությամբ դատավոր Ա.Բաբայանի, քննելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 12.08.2013թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6922/05/13 որոշման դեմ հայցվոր Լալա Ղազարյանի (ներկայացուցիչ՝ Մ.Դավթյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p>

Գործի դատավարական նախապատմությունը.

Լալա Ղազարյանը (ներկայացուցիչ՝ Մ. Դավթյան) հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետի, երրորդ անձ «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲ ընկերության, որով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ.-ի թիվ 68-Ա որոշումը և որպես իրավական հետևանք՝ մասնակի՝ հաստիքացուցակի ԱԱՊ բաժնուն մանկաբարձուհու հաստիքը կրճատելու մասով, անվավեր ճանաչել «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲ ընկերության կողմից կազմված և 2013թ.-ին ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացված հաստիքացուցակը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Միրզոյան) /այսուհետ՝ Ղատարան/ 12.08.2013թ. որոշմամբ Լալա Ղազարյանի կողմից ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետի, երրորդ անձ «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲ ընկերության ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ որոշմամբ որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմնավորում նշելով, որ բառացի մեջբերում. «Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը, վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով, հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:

Ղատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և չի ծագում հանրային իրավահարաբերություններից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին»:

Ղատարանը գտնում է, որ սույն հայցադիմումով ներկայացված պահանջները աշխատանքային բնույթի են, ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում և բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից, ուստի սույն հայցապահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է

հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:», մեջբերման ավարտ:

Ղատարանի 12.08.2013թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6922/05/13 որոշման դեմ հայցվոր Լալա Ղազարյանի (ներկայացուցիչ՝ Մ.Ղավթյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 17.09.2013թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Երրորդ անձ «Գառնիի առողջության կենտրոն» ՊՓԲ ընկերության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Ներկայացված վերաքննիչ բողոքի համաձայն՝ Ղատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 53-րդ հոդվածի 1-ին մասի, 117.14-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի պահանջները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործողությունն է:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն:

Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված որևէ խմբի:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի՝

1. Ղատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

2. Ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր ապացույցները և իրեղեն ապացույցները:

Ղատարանը, խախտելով վերոնշյալ հոդվածների պահանջները, գնահատման չի ենթարկել բողոքարկվող՝ ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ-ի թիվ 68-Ա որոշումը և դրան կից ներկայացված ապացույցները, որոնք հաստատում են, որ վարչական մարմինը՝ Կոտայքի մարզպետը, կատարել է գործողություն, այն է՝ ընդունել է թիվ 68-Ա վիճարկվող որոշումը, որը հիմք է հանդիսացել իր վստահորդի աշխատանքից ազատելու համար, և որ իր վստահորդի իրավունքների խախտման հիմք հանդիսացող որոշման իրավական հետևանք է հանդիսացել Կոտայքի մարզպետի կողմից 07.03.2013թ-ի թիվ 68-Ա որոշմամբ հաստատված աշխատանքային հաստիքացուցակը, համաձայն որի՝ նրանում չի ներառվել իր վստահորդի հաստիքը, իսկ առանց Կոտայքի մարզպետի կողմից օրենքի խախտմամբ ընդունված վիճարկվող վարչական ակտի՝ որոշման, վերացման՝ հնարավոր չի լինի վերականգնել նրա աշխատանքային և սահմանադրական իրավունքները:

Ղատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ-ի թիվ 68-Ա որոշումն ուղղված է որոշակի անհատական չափանիշներով առանձնացված որևէ խմբի՝ «Գառնի առողջական կենտրոն» ՊՓԲ ընկերության աշխատակիցների հաստիքացուցակների հաստատմանը, որով նրանց մի մասի համար որոշումը սահմանել, ձանաչել, փոփոխել, իսկ իր վստահորդի համար վերացրել է նրա իրավունքը, որով վարչական մարմինը թույլ է տվել օրենքի խախտում:

Ղատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջը, որի արդյունքում Ղատարանն անտեսել է այն հանգամանքը, որ

իրենց կողմից բողոքարկվում է վարչական ակտ, որը բաղկացած է միմյանց փոխկապակցված ընթացիկ և եզրափակիչ փուլերից, որ այն ընդունվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ: Դատարանը, խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները՝ արդյունքում խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջը, այն է՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Դատարանը չի հետազոտել գործով իր կողմից ներկայացված մի շարք ապացույցներ, որի արդյունքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում եղած՝ Կոտայքի մարզպետի կողմից 07.03.2013թ-ի թիվ 68-Ա որոշումը, այլապես Դատարանը կընդուներ այլ որոշում, այն է՝ հայցադիմումը կընդուներ վարույթ և իր գործողություններով չէր խախտի իր վստահորդի՝ ՀՀ Սահմանադրությամբ կարգավորվող՝ անձի իրավական պաշտպանության իրավունքները:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք...»

Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Տվյալ դեպքում, Դատարանն իր 12.08.2013թ. թիվ ԿԴ/6922/05/13 որոշմամբ զրկել է իր վստահորդին ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով պաշտպանելու իր իրավունքները, որով խախտել է դատավարական և նյութական իրավունքի նորմերը: Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է բավարարել բողոքը և վերացնել Դատարանի 12.08.2013թ. թիվ ԿԴ/6922/05/13 վարչական գործով կայացված որոշումը:

Վերաքննիչ բողոքի պատասխանով գտել են, որ Դատարանի որոշումը հիմնավոր է, բխում է օրենքի պահանջներից և այն վերացնելու հիմքեր չկան:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության

արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, այսինքն անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը և հիմքը և այլն: Անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրականացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում է վարչական դատավարության կարգով՝ հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանության ձև:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը /այսուհետ՝ Օրենսգիրք/:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով, 2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, 3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության: Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, դրանով ամրագրել է նաև տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձևը՝ հայց հարուցելը:

Միաժամանակ, անձը տնօրինչականության սկզբունքի հիման վրա դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս պետք է առաջնորդվի տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կանոններով, մասնավորապես՝ ենթակայություն, հայց հարուցելու կանոններ և այլն:

Օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն վարչարարությունը դա վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրակացվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների համաձայն վարչական դատարանում հարուցվող հայցերի տեսակներն են՝ «վիճարկման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, «պարտավորեցման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել, «գործողության կատարման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը և «ճանաչման հայցը», որով հայցվորը կարող է 1. պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան, 2. պահանջել ճանաչելու վարչական ակտն առաջին լինելը, 3. պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ, 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վերը շարադրված իրավանորմերի տրամաբանական շաղկապվածությունը հանգեցնում է դրանց համակարգային վերլուծության, որից հետևում է, որ տվյալ դեպքում տնօրինչականության սկզբունքի հիման վրա վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս անձը պետք է առաջնորդվի նաև օրենսդրի կողմից տվյալ դատական պաշտպանության ձևի համար սահմանված հետևյալ կանոններով՝ վարչական դատարանում քննության ենթակա են հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը, այսինքն այն վեճերը՝ տվյալ դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասով, որոնք պայմանավորված են պետական կամ

տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց իրականացված վարչարարությամբ՝ գործողություններով կամ անգործությամբ, կամ վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտերով, որոնք խախտել են կամ անմիջականորեն կարող են խախտել իրավաբանական (ֆիզիկական) անձի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, որից ելնելով սահմանվել են նաև վարչական դատարանում վարչական գործի վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող համապատասխան հայցատեսակները՝ «վիճարկման», «պարտավորեցման», «գործողության կատարման», «ճանաչման» հայցերը, այսինքն վարչական դատավարության կարգով անձն ազատ չէ ընտրելու, թե ինչ հայցապահանջ ներկայացնել, այլ այն պետք է բխի հանրային իրավահարբերություններից՝ վարչական մարմինների (պաշտոնատար անձանց) իրականացված վարչարարությունից և լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով սահմանված հայցատեսակներով ներկայացվող պահանջներից որևէ մեկը, իսկ հակառակ պարագայում հայցը (հայցադիմումով ներկայացված պահանջը) վարչական դատարանում քննության ենթակա չի լինի:

Օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն հայցադիմումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝ «1» հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, «2» հայցադիմումը վերադարձնելու մասին, «3» հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

Օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն դատավորը պարտավոր է հայցադիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարույթ ընդունել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն սույն օրենսգրքի 78-րդ և 79-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Փաստորեն, օրենսդիրը հստակ սահմանել է, որ դատարանը պարտավոր է հայցադիմումն ընդունել միայն այն դեպքում, երբ առկա են օրենքով դրա համար սահմանված հիմքերը, այն է՝ հայց հարուցելու իրավունքի նախադրյալները և հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանները (պահպանված է հայց հարուցելու կարգը):

Հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանների բացակայության (պայմանների պահպանված չլինելու) դեպքում դատարանը վերադարձնում է ներկայացված հայցադիմումը (Օրենսգրքի 78-րդ հոդված), իսկ հայց հարուցելու իրավունքի նախադրյալների բացակայության դեպքում դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը (Օրենսգրքի 79-րդ հոդված):

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդրի կողմից հստակ սահմանվել են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, որոնցից հանդիսանում է նաև հայցը վարչական դատարանում քննության ենթակա չլինելը, այսինքն ներկայացված՝ հայցը վարչական դատարանում քննության ենթակա չլինելը պայմանավորում է հայց հարուցելու նախադրյալի բացակայությունը: Տվյալ դեպքում, հայցվոր Լալա Ղազարյանի (ներկայացուցիչ՝ Մ.Ղավթյան) հայցադիմումում ներկայացվել են հետևյալ հիմնական և ածանցյալ պահանջները՝ անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ.-ի թիվ 68-Ա որոշումը և որպես իրավական հետևանք՝ մասնակի՝ հաստիքացուցակի ԱԱՊ բաժնում մանկաբարձուհու հաստիքը կրճատելու մասով, անվավեր ճանաչել «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲԸ ընկերության կողմից կազմված և 2013թ.-ին ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատմանը

ներկայացված հաստիքացուցակը:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

Փաստորեն, վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակով օրենսդրի կողմից սահմանված կանոններին համապատասխան անձը վարչական դատարան կարող է վիճարկման հայց ներկայացնել միայն պետական կամ տեղադրական ինքնակառավարման մարմնի (դրանց պաշտոնատար անձի կողմից) ընդունված՝ իր իրավունքերին կամ ազատություններին միջամտող վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու պահանջով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունը և համայնքները կարող են լինել ընկերության բաժնետեր՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերով ընկերությունների հիմնադրման մասին ՀՀ կառավարության որոշումը պետք է պարունակի դրույթներ նաև հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման մարմնի (մարմինների) և նրանցից յուրաքանչյուրի կառավարմանը հանձնված բաժնետոմսերի փաթեթի մասին:

ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 881-Ն որոշման 1-ին կետով հավանություն է տրվել 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին՝ համաձայն հավելվածի, որի 128-րդ կետի համաձայն «Գառնիի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս բաժնետնասը պատկանում է միակ բաժնետեր Հայաստանի Հանրապետությանը, որի անունից հանդես եկող մարմինն է՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանը:

Վերոգրյալից ելնելով, հիմք ընդունելով հայցադիմումով վիճարկվող՝

ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ. թիվ 68-Ա որոշման բնույթը դրա կարգավորման առարկան, մասնավորապես՝ հայցադիմումում շարադրված պատճառաբանություններից և հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի համաձայն նշված որոշմամբ հաստատվել է «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲ ընկերության նոր հաստիքացուցակը, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ. թիվ 68-Ա հրամանը վարչական ակտ չի հանդիսանում՝ այն վարչարարության արդյունք չէ, այն չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և այն ուղղված չէ հանրային իրավունքի բնագավառում անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, իսկ ՀՀ Կոտայքի մարզպետը նշված հրամանով «Գառնիի առողջության կենտրոն» ՊԲ ընկերության հաստիքացուցակը հաստատելիս գործել է ոչ թե որպես վարչական

	<p>մարմին (պաշտոնատար անձ), այլ բացառապես որպես նշված բաժնետիրական ընկերության հիմնադրի, միակ բաժնետիրոջ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ՝ վերջինիս անունից՝ տվյալ ընկերության կառավարման լիազորությունների շրջանակում, այինքն գործել է մասնավոր իրավունքի դաշտում, հետևաբար ՀՀ Կոտայքի մարզպետի 07.03.2013թ. թիվ 68-Ա հրամանը չի կարող որպես վարչական ակտ վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ նման պահանջով պայմանավորված հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, ինչն էլ պայմանավորել է ներկայացված հայցը հարուցելու նախադրյալի բացակայությունը և հանգեցրել է հայցադիմումի ընդունումը մերժելու՝ Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված Դատարանի պարտականությանը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Օրենսգրքի 112-րդ հոդվածի նորմերը, փաստում է, որ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ միջանկյալ դատական ակտը կայացնելիս Դատարանի կողմից պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով առանձին ակտի ձևով կայացված որոշմանն առաջադրվող պահանջները, մասնավորապես՝ համապատասխան իրավական ակտերի վկայակոչմամբ որոշման մեջ նշվել են այն շարժառիթները, որոնցով Դատարանը հանգել է հետևությունների: Վերոգրյալ իրավանորմերի, եզրահանգումների և պատճառաբանությունների հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտավ, որ բողոքում նշված հիմքերը և հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ Դատարանի 12.08.2013թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6922/05/13 որոշումը վերացնելու համար:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 2-րդ մասով և 117.14-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանը</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Հայցվոր Լալա Ղազարյանի (ներկայացուցիչ՝ Մ.Դավթյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 12.08.2013թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6922/05/13 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:</p> <p>Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԲԱԲԱՅԱՆ</p>
<p>Դատական ակտի ամսաթիվը:</p>	<p>07-10-2013</p>
<p>Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):</p>	<p>0</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>24-10-2013</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>24-10-2013</p>
<p>Էջերի քանակ:</p>	<p>113</p>
<p>Գործին կից նյութերը:</p>	
<p>Գործն ուղարկվել է:</p>	<p>24-10-2013</p>
<p>Ուր:</p>	<p>Վճռաբեկ</p>

Գրության համարը:	6960/13
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	30-10-2013
Ղատական Գործ N: ՎԴ/6922/05/13	
Ամսաթիվ:	21-10-2013
Բողոք բերող անձը	
Անուն	Լալա
Ազգանուն	Ղազարյան
Հասցե	ԿՄ, գ. Գառնի
Ներկայացուցիչ	
Անուն	Մկրտիչ
Ազգանուն	Ղավթյան
Հասցե	Երևան, Գ. Զոհրապի տուն 60
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	<<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշման դեմ հայցվոր Լալա Ղազարյանի (ներկայացուցիչ՝ Մ. Ղավթյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշման դեմ:
Գործի համարը:	ՎԴ/6922/05/13
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Բողոքը ստացվել է:	Միջանկյալ դատական ակտի դեմ
Գործի ստացման ամսաթիվը:	30-10-2013
Էջերի քանակը:	1-113
Գործին կից փաստաթղթերը:	
Վճռաբեկ վարույթի համարը:	ՎԴ/6922/05/13
Ամսաթիվ:	30-10-2013
Նախագահող դատավոր	
Ղատարանի անվանում:	Վճռաբեկ
Ղատավորի անուն:	Ելենա Միհրանի Սողոմոնյան
Ղատավոր	
Ղատարանի անվանում:	Վճռաբեկ
Ղատավորի անուն:	

Այլ նշումներ:

<p>Ամսաթիվ:</p>	<p>06-11-2013</p>
<p>Որոշման բովանդակությունը:</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>ՀՀ վարչական վերաքննիչ Վարչական գործ թիվ ՎԴ/6922/05/13 դատարանի որոշում 2013թ. Վարչական գործ թիվ ՎԴ/6922/05/13 Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p><<06>> նոյեմբերի 2013թ. ք. Երևան</p> <p>Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),</p> <p>նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ</p> <p>քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.10.2013 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշման դեմ Լալա Ղազարյանի ներկայացուցիչ Մկրտիչ Ղավթյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>Դիմելով դատարան՝ Լալա Ղազարյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոտայքի մարզպետի 07.03.2013 թվականի թիվ 68-Ա որոշումը և որպես իրավական հետևանք՝ մասնակի՝ հաստիքացուցակի ԱԱՊ բաժնում մանկաբարձուհու հաստիքը կրճատելու մասով, անվավեր ճանաչել <<Գառնիի առողջության կենտրոն>> ՊՓԲԸ-ի կողմից կազմված և 2013 թվականին Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացված հաստիքացուցակը: ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.08.2013 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.10.2013 թվականի որոշմամբ Լալա Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 12.08.2013 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:</p> <p>Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լալա Ղազարյանի ներկայացուցիչը և պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 07.10.2013 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը:</p> <p>Վճռաբեկ դատարանը, քննարկելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.</p>

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտում, կամ առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտում:

Հետևաբար բերված վճռաբեկ բողոքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ և 118.8-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերադարձնել թիվ ՎԴ/6922/05/13 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.10.2013 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշման դեմ Լալա Ղազարյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Ղատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Վ. ԱԲԵԼՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ՀԱՅՐԻՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գործի առաքման ամսաթիվը:	02-12-2013
Դատարան:	Վարչական
Այլ նշումներ:	